Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

ՀՆԱ-ի ամբողջականության ապահովում

Գործունեություն Գ.5
Ներդրման օժանդակություն

Ծրագրի մասնակիցներ

Լյուսյա Խաչատրյան, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
Սուսաննա Խաչատրյան, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
Նադեժդա Աստվածատուրովա, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Դանիա, 2012 թ. հունիսի 10-ից հունիսի – 15-ը

STATISTICS DENMARK		
Դանիայի վիճակագրական ծառայություն		ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

Հեղինակների կոնտակտային տվյալներ

Լյուսյա Խաչատրյան
ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ
Երևան, Կառավարական 3շ.
Էլ.փոստ lusya@armstat.am

Սուսաննա Խաչատրյան
ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների գլխավոր մասնագետ
Երևան, Կառավարական 3շ.

Նադեժդա Աստվածատուրովա
ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների գլխավոր մասնագետ
Երևան, Կառավարական 3շ.

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Գնահատում և արդյունքներ 4
3. Ամփոփում և առաջարկություններ 6
4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող քայլեր 8

Հավելվածներ
Հավելված 1 Տեխնիկական առաջադրանք 11
Հավելված 2 Տեխնիկական առաջադրանք
Հավելված 3 Աշխատանքային ծրագիր 14

Հապավումների ցանկ

ԵՀՀ-2010	Եվրոպական հաշիվների համակարգ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՀ ԱՎԾ	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՀՀ93	Ազգային հաշիվների համակարգ 1993 (ՄԱԿ)
SNA2010	Ազգային հաշիվների համակարգ 2010 (ՄԱԿ)
ԱՊ	Անդամ պետություն
ՇԵ	Շահառու երկիր

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այցելության հիմնական նպատակն էր ուսումնասիրել Դանիայի ազգային հաշիվների համակարգը որպես «Ազգային հաշիվների ամբողջական զարգացած համակարգի օրինակ:

Քննարկել 1Բ, 2Բ և 3Բ աղյուսակների նախագծերը (ՀՆԱ՝ ծախսային եղանակ), որոնք նախապատրաստվել էին ՇԵ փորձագետների կողմից և ուղարկվել ԱՊ փորձագետներին նախքան առաքելությունը էլեկտրոնային փոստի միջոցով՝ համապատասխան մեկնաբանություններով, ինչպես նաև համապարփակության ճշգրտումների հնարավոր հետագա զարգացումները:

Քննարկվեցին մի շարք հարցեր հետևյալ թեմաներով՝

- Դանիայի ազգային հաշիվների վիճակագրության համակարգի տարբեր բաղադրիչների ներկայացում
- Դանիայի ռեսուրսներ-օգտագործում աղյուսակների ներկայացում և քննարկում
- Դանիայի եռամսյակային ազգային հաշիվներ. մեթոդաբանություն և տվյալների աղբյուրներ
- Թվինինգ ծրագրի ՀՆԱ-ի ամբողջականության բարելավման՝ Գ բաղադրիչի ներկայիս կարգավիճակի արդիականացում՝ շեշտը դնելով Դանիայի վիճակագրության մոտեցումների վրա
- Անօրինական գործունեության գնահատման մեթոդաբանություն
- Սեփականատիրոջ կողմից զբաղեցրած բնակարանների վարձակալության անուղղակիորեն չափվող ծառայությունների հաշվարկ
- Բնաիրային նպաստներ
- Սեզոնային ճշգրտման «Դեմետրա+» ծրագրի շնորհանդես

Ամփոփում և հետագա աշխատանքների «Ճանապարհային քարտեզ»

ՇԵ փորձագետները շնորհակալություն են հայտնում ԱՊ երկրի բոլոր պաշտոնյաներին և անհատներին օժանդակության և տրամադրված արժեքավոր տեղեկատվության համար, ինչը ստացվել է Դանիայում գտնվելու ընթացքում, և նպաստել աշխատանքի ընթացքի բարելավմանը:

2.Գնահատում և արդյունքներ

Այցելության սկզբում ողջույնի խոսքով հանդես եկավ Դանիայի վիճակագրության միջազգային համագործակցության բաժնի աշխատակից տկն. Կառլոտ Յ. Հանսենը, որը պատմական ակնարկով ներկայացրեց Դանիայի վիճակագրության նախապատմությունը, զարգացումները և ներկան, կառուցվածքային ստորաբաժանումները և դրանց կողմից իրականացվող հիմնական աշխատանքները:

Այնուհետև հանդիպումը շարունակվեց ազգային հաշիվների ստորաբաժանման ղեկավար պարոն Օլե Բերների հետ, որն իր հերթին ներկայացրեց տնտեսական վիճակագրության վարչության կառուցվածքը (ազգային հաշիվների, պետական ֆինանսների, գների և սպառման, արտաքին հատվածի և տնտեսական մոդելների ստորաբաժանումներ) և գործառույթները:
Դանիայի վիճակագրության ազգային հաշիվների մի խումբ աշխատակիցներ ներկայացրեցին մի շարք թեմաներով շնորհանդեսներ՝ ըստ նախօրոք կազմված այցելության ծրագրի:
Պարոն Տիմի Գրավերսենը ներկայացրեց Դանիայի եռամսյակային ազգային հաշիվները և այդ հաշիվների կազմման համար անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրները, հրապարակման ժամանակացույցը:
Ռեսուրսներ-օգտագործում աղյուսակներն ըստ առանձին բաղադրիչների և ըստ 2350 ապրանքատեսակների ներկայացրեց պարոն Սորեն Լարսենը:
Պարոն Բրայան Սուդելը ներկայացրեց Դանիայի վիճակագրությունում սեփականատիրոջ կողմից զբաղեցրած բնակարանների վարձակալության անուղղակիորեն չափվող ծառայությունների հաշվարկը:
Տիկին Կատերին Լ. Յոհանսենը ներկայացրեց բնաիրային նպաստների հաշվարկման կարգը, տեսակները և տեղեկատվության աղբյուրները:
Տիկին Անետ Թոմսենը և տիկին Մարիա Նիլսոնը ներկայացրեցին անօրինական գործունեության տեսակները, գնահատման եղանակները: Քննարկվեցին նաև ԵՀՀ-2010 ներդրման հետ կապված մի շարք մեթոդաբանական հարցեր:
Սեզոնային ճշգրտումների՝ Դեմետրա+ ծրագիրը պարզաբանումներով հանդերձ ներկայացրեց պարոն Հենրիկ Բուլով Հանսենը:
ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի մասնագետների կողմից ներկայացվեցին ՀՆԱ-ի անհամապարփակության աղյուսակային մոտեցման եղանակով կազմված 1Բ, 2Բ և 3Բ աղյուսակները:
N6 ճշգրտումները բարելավելու համար դանիացի փորձագետները ներկայացվեցին իրենց կողմից մշակված մեթոդաբանությունը:
Քննարկում ծավալվեց նաև անօրինական գործունեության որոշ տեսակների գնահատման վերաբերյալ, օրինակ՝ թմրաբիզնես և թրաֆիկինգ:
Այցելության արդյունքները ամփոփվեցին և հետագա աշխատանքների ճանապարհային քարտեզը քննարկվեց Օլե Բերների և Անետ Թոմսենի և ՀՀ ԱՎԾ փորձագետների հետ համատեղ:

Հիմք ընդունելով 1Բ, 2Բ և 3Բ աղյուսակները՝ տեղի ունեցան արդյունավետ և բովանդակալից քննարկումներ համապարփակության ճշգրտումների համար օգտագործվող մեթոդների և աղյուսակներում դրանց դասակարգման մասին:

N2 Անօրինական արտադրող

2012 թ. հունիս ամսին Դանիայում կայացած հանդիպման ժամանակ Դանիայի փորձագետների հետ քննարկվեց անհամապարփակության N2 տեսակի համար ճշգրտումների գնահատման հնարավորությունները: ԱՊ փորձագետները ներկայացրեցին տարբեր մեթոդներ անօրինական գործունեության գնահատման համար, Եվրոստատի կողմից սահմանված անօրինական գործունեությունների

երեք հիմնական տեսակները՝ թմրանյութեր, մարմնավաճառություն և մաքսանենգություն:

Աղյուսակներ 1B, 2B և 3B

Աղյուսակ 1Բ Ըստ վաղօրոք կայացած պայմանավորվածության ներկայացվել են անհամապարփակության տեսակները՝ Ծախսային մոտեցմամբ 1B, 2B և 3B աղյուսակները: Ներկայացվեց ոչ համապարփակության 1Բ աղյուսակը, որը ներառում է ՀՆԱ-ի ըստ ծախսային բաղադրիչների ոչ համապարփակության տեսակները (N1, N3, N4, N6, N7), նշելով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները և գնահատման մեթոդները:

Աղյուսակ 2Բ Ներկայացվեց ոչ համապարփակության 2Բ աղյուսակը, որտեղ նշվում են ՀՆԱ-ի ըստ ծախսային բաղադրիչների անհամապարփակության անվանական արժեքները և դրանց տեսակարար կշիռները ՀՆԱ-ում:

Աղյուսակ 3Բ Ներկայացվեց ոչ համապարփակության 3Բ աղյուսակը, որտեղ նշվում են ՀՆԱ-ի ըստ ծախսային բաղադրիչների ոչ համապարփակության ամփոփ տվյալները բացարձակ արժեքներով և ՀՆԱ-ում դրանց տեսակարար կշիռները:

N6 Արտադրողի կողմից կեղծ տվյալների տրամադրում

Հիմնվելով N6 ճշգրտումները բարելավելու համար քննարկումների վրա՝ համաձայնություն ձեռք բերվեց ուսումնասիրել և կիրառել դանիացի փորձագետների կողմից մշակված մեթոդաբանությունը, համաձայն որի N6-ի գնահատականը հաշվարկել, ըստ ընտեսական գործունեության տեսակների, ելնելով ֆորմալ հատվածում մեկ զբաղվածին ընկնող թողարկման ծավալից՝ ճշգրտված՝ ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածների աշխատաժամանակի գործակցով:

N7 Ոչ ամբողջական վիճակագրական տվյալներ

ԱՊ փորձագետները առաջարկեցին ճշգրտումներ իրականացնել թեյավճարների, համար: Մեթոդներից մեկը կարող է լինել հյուրանոցների և ռեստորանների թողարկմանը որոշակի տոկոսի գումարումը: ՇԵ փորձագետները կդիտարկեն և հաշվարկներ կիրականացնեն՝ հիմնվելով փորձագիտական կարծիքի վրա:

Սեզոնային ճշգրտումների ծրագրային ապահովման օժանդակության շրջանակում ներկայացվեց Դանիայի վճակագրությունում սեզոնային ճշգրտումների համար կիրառվող **Դեմետրա+ ծրագիրը:**

3. Ամփոփում և առաջարկություններ

Կազմվել են երեք 1B, 2B և 3B աղյուսակները: Ի լրումն կազմվել է մի փաստաթուղթ համապատասխան մեկնաբանություններով՝ կազմված աղուսակների մասին:

Հիմնվելով այդ աղյուսակների ԱՊ և ՇԵ փորձագետների պատրաստակամության վրա, տեղի ունեցան արդյունավետ քննարկումներ:

ԱՊ փորձագետների կողմից արվեցին մի շարք առաջարկություններ՝կապված N6 անհամապարփակության գնահատման համար կատարվող հաշվարկների հետ, մասնավորապես ելնել մեկ զբաղվածին ընկնող թողարկման ծավալից՝ ճշգրտված ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածների աշխատաժամանակի գործակցով:

Սեփականատիրոջ կողմից զբաղեցրած բնակարանների թողարկման հաշվարկը ներկայումս դասակարգվում է որպես ոչ ֆորմալ գործունեության ճշգրտում և որպես ոչ համապարփակության ճշգրտում: Այլ երկրների հետ համադրելի լինելու համար առաջարկվում է դասակարգել այս գործունեությունը որպես ֆորմալ: Սա չի փոխի ՀՆԱ-ն, սակայն կնվազի ոչ ֆորմալ հատվածի մասնաբաժինը:
Դանիայի փորձագետներն առաջարկեցին հաշվարկների դանիական տարբերակը, որտեղ հաշվարկների իրականացման համար օգտագործվում են տեղեկատվության մի քանի աղբյուրներ: Առաջին հերթին դա շինությունների ռեգիստրն է, որը պարունակում է տվյալներ շինության տարեթվի, որակի, աշխարհագրական դիրքի, չափերի, սենյակների քանակի և այլնի վերաբերյալ: ռեգիստրում առկա է նաև տեղեկատվություն սեփականության ձևերի (սեփական, համայնքային, վարձակալված) վերաբերյալ:
Ըստ վերը նշված ցուցանիշների ձևավորվել են 200 ստրատաներ, որոնցից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է միջին արենդավճար, որի տվյալները ստացվում են ընտրանքային հետազոտությունների միջոցով:

Ուսուցողական այցելության ընթացքում վաղօրոք կայացած պայմանավորվածության համաձայն քննարկվեցին անօրինական գործունեության հաշվարկի դանիական աղբյուրները ու մեթոդները:

ՀՀ-ում ներկայումս չեն արվում ճշգրտումներ N2 անօրինական գործունեությունների համար: Անհրաժեշտ է հետազոտել այս գնահատումների համար հաշվարկի աղբյուրները և մեթոդները: Որպես գործառնական սկզբնակետ կարելի է մտապահել մեկ կամ երեք տեսակների համար՝ մարմնավաճառություն, թմրանյութեր, մաքսանենգություն:

Առաջարկվեցին կատարել փորձնական հաշվարկներ, օգտագործելով մարմնավաճառության, թմրանյութերի, մաքսանենգության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տարբեր կառույցների կողմից միջազգային կառույցներին ներկայացվող զեկույցները, ինչպես նաև վարչական ռեգիստրների կողմից հրապարակվող տեղեկատվությունը:
Կարելի է կատարել փորձնական հաշվարկներ, բայց պարտադիր չէ այն ներառել ներկայումս իրականացվող ՀՆԱ-ի հաշվարկներում: Հետագայում դա թերևս հնարավոր է:

N7:

Ներկայումս չեն արվում ճշգրտումներ ռեստորանների և հյուրանոցների թեյավճարների համար: Առաջարվում է հետազոտել թեյավճարների գնահատման հնարավոր աղբյուրները և կատարել փորձնական հաշվարկներ, օգտագործելով աշխատուժի հետազոտության տվյալները:

4. Ճանապարհային քարտեզ և հաջորդ գործունեության (Գ4) գործողությունների պլան Երևանում (սեպտեմբեր 2012թ.)

Գործունեության նպատակը. Աշխատանքներ իրականացնել որոշ գործունեությունների համար (կեսը) N տեսակների անհամապարփակության գնահատականների բարելավման ուղղությամբ: Ավարտել անհամապարփակության աղյուսակային մոտեցման B աղյուսակների կազմումը (ՀՆԱ ծախսային եղանակ):

Անհամապարփակության հետ կապված հարցերի քննարկում.
N2 անօրինական գործունեություն
Կքննարկվի առնվազն մեկ գործունեության համար առաջին գնահատականը

N6 Արտադրողի կողմից կեղծ տվյալների տրամադրում
Քննարկում կապված աշխատաժամանակի տվյալների կիրառմամբ հնարավոր ճշգրտման հետ, ինչպես նաև չհայտարարագրված թողարկման դեպքում միջանկյալ սպառման հաշվառման հետ:

N7 Ոչ ամբողջական վիճակագրական տվյալներ
Քննարկում կապված հյուրանոցներում և ռեստորաններում թեյավճարների առաջին գնահատականի հետ՝ հիմնված փորձագիտական գնահատականների վրա:

Բնաիրային նպաստներ. մասնավորապես ինչպես մեկնաբանել ազգային հաշիվների տեսանկյունից 2012 թվականից պետական ծառայողներին տրամադրված «սոցիալական փաթեթը»

Աղյուսակային մոտեցում. անհամապարփակության աղյուսակային մոտեցման B աղյուսակների քննարկում և վերջնական կազմումը (ՀՆԱ ծախսային եղանակ):

Քննարկումներ կապված ԱՀՀ-2008-ի ներդրման հետ:

Հաջորդ գործունեությունից (Գ4) առաջ իրականացվող քայլեր

Անօրինական գործունեություն.

- ԱՊ երկրի փորձագետները կուղարկեն ՇԵ փորձագետներին անօրինական գործունեության հաշվարկները էլեկտրոնային աղյուսակները ոչ ուշ քան հուլիսի 6-ը:
- ՇԵ փորձագետները կորոշեն Հայաստանում առկա և առավել գերակշռող անօրինական գործունեության տեսակները:
- ՇԵ փորձագետները պետք է հետազոտեն տվյալների աղբյուրները և տան գնահատական առնվազն մեկ անօրինական գործունեության համար:
- ՇԵ փորձագետները պետք է ուղարկեն տվայալները և առաջին գնահատականները ԱՊ փորձագետներին առաքելությունից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Արտադրողի կողմից կեղծ տվյալների տրամադրում

- ՇԵ փորձագետները պետք է որոշեն, թե որ գործունեության N6 ճշգրտման համար է ընդունելի համարվում աշխատաժամանակի կիրառման մեթոդը:
- ՇԵ փորձագետները պետք է իրականացնեն առաջին նախնական գնահատականները N6 ճշգրտման համար՝ աշխատաժամանակի կիրառման մեթոդով և դրանք ուղարկեն ԱՊ փորձագետներին առաքելությունից առնվազն մեկ շաբաթ առաջ:
- ՇԵ փորձագետները պետք է որոշեն թե ինչպես հաշվարկեն չհայտարարագրված թողարկման դեպքում համապատասխան միջանկյալ սպառումը:
- ՇԵ փորձագետները պետք է հայտնագործեն, թե ինչպիսի փորձագիտական գնահատման մեթոդ է պետք կիրառել հյուրանոցների և ռեստորանների թեյավճարների համար:

Բնաիրային նպաստներ

- ՇԵ փորձագետները պետք է ուղարկեն ԱՊ փորձագետներին կառավարության կողմից պետական ծառայողներին տրամադրված սոցիալական փաթեթի համառոտ նկարագիրը ոչ ուշ քան Օգոստոսի 10-ը:

Աղյուսակային մոտեցում. անհամապարփակության աղյուսակային մոտեցման B աղյուսակներ

- ՇԵ փորձագետները պետք է շարունակեն աշխատանքը B աղյուսակների կազմման ուղղությամբ և ուղարկեն արդիականացված աղյուսակները ԱՊ երկրի փորձագետներին առաքելությունից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Հարցեր կապված ԱՀՀ-2008-ի ներդրման հետ:

- ՇԵ փորձագետները պետք է ուղարկեն հարցեր կապված ԱՀՀ-2008-ի ներդրման հետ ԱՊ երկրի փորձագետներին առաքելությունից ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ:

Գ4 գործունեությունից հետո գործողությունների նախնական պլան

Գնահատման բարելավման հետագա աշխատանքների իրականացում

ՇԵ փորձագետները պետք է ուղարկեն բարելավված գնահատականները ԱՊ երկրի փորձագետներին ոչ ուշ քան նոյեմբերի 10-ը: ԱՊ երկրի փորձագետները պետք է ուղարկեն դրանց վերաբերյալ մեկնաբանությունները ՇԵ փորձագետներին մինչև նոյեմբերի 20-ը:

Վերանայման քաղաքականությունը և նոր գնահատականների ներդրումը ՀՀ ազգային հաշիվներում

Այն պետք է քննարկվի այն ժամանակ, երբ նախատեսված կլինի իրականացնել և հրապարակել վերանայված ՀՀ ազգային հաշիվները:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական Առաջադրանք (Գ. 4)-2012 թ. հունիսի 10-15

□□ □□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□□□□□□□□□ «□□□–□ □□□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□»՝ □ □□□□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□՝ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□՝ □□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□ «□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□» □□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□:

Ուսումնական այցելության նպատակն է

1. Ուսումնասիրել.
   - Դանիայի ազգային հաշիվների համակարգի տարբեր բաղադրիչները
   - ռեսուրսներ – օգտագործում աղյուսակները
   - տարեկան և եռամսյակային ազգային հաշիվների միջև կապը
   - այլ բաժինների հետ համագործակցությունը
   - սեզոնային ճշգրտումներ
   - սոցիալական նպաստներ բնաիրային ձևով

2. Գ բաղադրիչին վերաբերվող հարցերի առնչությամբ ՀՆԱ-ի ամբողջականության ներկա իրավիճակի արդիականացում.
   - անօրինական գործունեություն
   - սեփական բնակարանում ապրելու պայմանականորեն հաշվարկվող վարձակալության արժեքը
   - աշխատուժի հետազոտության տվյալների օգտագործումը
   - Աղյուսակային մոտեցմամբ կազմված 1Բ, 2Բ և 3Բ աղյուսակների քննարկում

3. Քննարկել հետագա գործողությունների ճանապարհային քարտեզը:

Ուսումնական այցելությունը կնպաստի Հայաստանում Եվրոստատի կողմից մշակված Աղյուսակային մոտեցումը որպես տնտեսության թերի ծածկույթի խնդիրները բացահայտելու և համապարփակությունը ապահովելու մեթոդի ներդրման գործընթացի հետագա զարգացումներին, ինչպես նաև ՀՀ ազգային հաշիվների վիճակագրության բարելավմանը:

3. Ծրագրի մասնակիցները

Լուսյա Խաչատրյան, Ազգային հաշիվների և մակրոտնտեսական ցուցանիշների բաժնի պետ

Նադեժդա Աստվածատուրովա, Ազգային հաշիվների և մակրոտնտեսական ցուցանիշների բաժնի գլխավոր մասնագետ
Սուսաննա Խաչատրյան, Ազգային հաշիվների և մակրոտնտեսական ցուցանիշների բաժնի գլխավոր մասնագետ

Անետ Թոմսեն, Դանիայի Վիճակագրական Ծառայության Ֆինանսական բաժնի պետի տեղակալ
Մարիա Նիլսոն, Դանիայի Վիճակագրական Ծառայության, Ազգային հաշիվների բաժնի ստորաբաժանման ղեկավար

Հավելված 2. Տեխնիկական առաջադրանք (Գ5); 2012 թ. հունիսի 11-ից - 15 -ը

Բաղադրիչ Ա	*Որակի Կառավարում*
Բաղադրիչ Բ	Բիզնես Ռեգիստր, Կառուցվածքային բիզնես հետազոտություն և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն
Բաղադրիչ Գ	**ՀՆԱ-ի ամբողջականության բարելավում**
Բաղադրիչ Դ	Գյուղատնտեսության համատարած հաշվառում
Բաղադրիչ Ե	Հարմոնիզացված Սպառողական Գների ինդեքս
Բաղադրիչ Զ	ՏՀՏ հանրություն

Գործունեություն Գ5՝ Ուսուցողական այցելություն՝ Ամբողջական մշակված ազգային հաշիվների համակարգի օրինակ

1. Գործունեության նպատակը
Գործունեության նպատակն է ներկայացնել ՇԵ փորձագետներին Դանիայի ազգային հաշիվների ամբողջական համակարգը

2. Գործունեության ակնկալվող արդյունքները

Գործունեության ակնկալվող արդյունքներն են քննարկումներ և ներկայացումներ ներքոբերյալ թեմանենի վերաբերյալ՝

- Դանիայի ազգային հաշիվների համակարգի տարբեր տարրեր
- Ռեսուրսների օգտագործման աղյուսակներ
- Տարեկան և եռամսյակային հաշիվների հարաբերակցությունը
- Համագործակցությունը այլ բաժինների հետ
- Թվինինգ նախագծի ՀՆԱ-ի ամբողջականության բարելավման ներկայիս կարգավիճակի արդիականացում ՝ շեշտը դնելով Դանիայի վիճակագրության մոտեցումների վրա
    - Անօրինական գործունեություն

- Սեփականատիրոջ կողմից զբաղեցրած բնակարաններ
- Բնաիրային նպաստներ
- ԱՀ օգտագործում

- Աշխատանքային ծրագրի և հետագա քայլերի քննարկում

Ուսուցողական այցելությունից հետո կներկայացվի գրավոր զեկույց:

3.Ուսուցողական այցելության մասնակիցներ

Լուսյա Խաչատրյան, Ազգային հաշիվների և մակրոտնտեսական ցուցանիշների բաժնի պետ
Նադեժդա Աստվածատուրովա, Ազգային հաշիվների և մակրոտնտեսական ցուցանիշների բաժնի գլխավոր մասնագետ
Սուսաննա Խաչատրյան, Ազգային հաշիվների և մակրոտնտեսական ցուցանիշների բաժնի գլխավոր մասնագետ
Դիանա Գասոյան, ԹՄԽ օգնական, թարգմանիչ

Դանիայի վիճակագրությունից (Նախնական)՝

Պրն. Լարս Տիգենսեն, Պրն. Յեսեր Էլեմոսե Յենսեն, Պրն. Օլե Բերներ, Տկն. Անետե Տոմսեն, Տկն. Մարիա Նիլսոն, Պրն. Տիմի Գրավերսեն, Պրն. Սորեն Լարսեն, Պրն. Բրայն Սուդել, Տկն. Կատերին Լինդեսկով Յոհանսեն, Պրն. Հենրիկ Բուլով Հանսեն

Հավելված 3. ՇԵ Փորձագետների հանդիպման ծրագիրը

2012 թ. հունիսի 11-ից հունիսի 15-ը

Ժամը	Նպատակը/Մանրամասնությունները	
Հունիսի 11, 10:00	Ողջույնի խոսք՝ Դանիա վիճակագրության մասին ներկայացում շաբաթվա ծրագրի քննարկում	Միջազգային խորհրդատվություն
Հունիսի 11, 13:00	Դանիայի ազգային հաշիվների ներկայացում	Պրն Օլե Բերներ
Հունիսի 11, 14.45	Եռամսյակային ազգային հաշիվներ՝ ներառյալ տեղեկատվական աղբյուրները	Պրն Տիմի Գրավենսեն
Հունիսի 12, 9:30	Ռեսուրսների օգտագործման աղյուսակներ՝ ներառյալ տեղեկատվական աղբյուրները	Պրն. Սորեն Լարսեն
Հունիսի 12 , 13:00	Սեփականատիրոջ կողմից զբաղեցրած բնակարաններ	Պրն. Բրայն Սուդել
	Բնաիրային նպաստներ	Տկն. Կատերին Լինդեսկով և Պրն. Բրայն Սուդել
Հունիսի 13, 9:30	Անօրինական գործունեություններ և ԵՀՀ2010 ներդրման հետ առնչվող մեթոդաբանական փոփոխություններ	Տկն. Անետ Տոմսեն Տկն. Մարիա Նիլսոն
Հունիսի 13, 12:30	Ազգային հաշիվների և Գների բաժնի համագործակցությունը	Միջազգային խորհրդատվություն
Հունիսի 14, 10:00	Սեզոնային ճշգրտումների հետ կապված աջակցություն	Պրն. Հենրիկ Բուլով Հանսեն
Հունիսի 14, 13:00	Առաջընթացի կարգավիճակ- ներկայացում ՇԵ փարձագետների կողմից. ԱՀ, և աղյուսակային մոտեցման 1Բ, 2Բ և 3Բ աղյուսակների քննարկում	Տկն. Անետ Տոմսեն Տկն. Մարիա Նիլսոն
Հունիսի 14, 16:00	Սոցիալական Ծրագիր	
Հունիսի 15, 10:00	Աշխատանքային ծրագիր և այլ հարցեր	Պրն Օլե Բերներ և Տկն. Անետ Տոմսեն
Հունիսի 15, 13:00	Ամփոփում և ուսուցողական այցելության գնահատում	Միջազգային խորհրդատվություն